

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2022-10-2-Ա

ք. Երևան

20.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հոկտեմբերի 20-ի նիստում քննարկեց 2022 թվականի հուլիսի 7-ին արտոնագրային հավատարմատար Արթուր Վարդերեսյանի կողմից ներկայացված՝ «ՖԻՄ» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Երևան 0002, Կենտրոն, Մաշտոցի պող., շ. 37, բն. 4, AM) «Teamvesting» (No20211080) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.  
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը շփոթելու աստիճան նման է 36-րդ դասի նույնատիպ ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «team», «teamPay PAYMENT SYSTEM BY TEAM» («ԹԻՄ» ՍՊԸ, ք. Երևան, Կենտրոն, Տերյան 19, բն. 3, N 32779 11.06.2021, N 33970 30.12.2021) համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ 10-րդ ենթակետի, 130-րդ կետի 1-ին ենթակետի, 132-րդ, 133-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են համարվել համակցված ապրանքային նշանները: Համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցրած, նույնիսկ եթե նշված նշանները միմյանցից լիովին տարբերվում են պատկերային մասով: Համակցված ապրանքային նշանի

գրանցումը ենթակա է մերժման եթե առկա է ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշան, որի հիմնական ընկալման բառային տարրը շփոթելու աստիճան նման է հայտարկված նշանի հիմնական ընկալման բառային տարրին: Այս դեպքում հայտարկված ապրանքային նշանը կարող է գրանցվել միայն ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությամբ: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որն էլ որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ գրանցված համակցված ապրանքային նշանների մաս կազմող «TEAM» բառն ամբողջովին ներառված է հայտարկված ապրանքային նշանի բառային արտահայտության մեջ՝ կազմելով նրա սկզբնամասը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը շփոթելու աստիճան նման է 36-րդ դասի նույնատիպ ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «team», «teamPay PAYMENT SYSTEM BY TEAM» («ԹԻՄ» ՍՊԸ, ք. Երևան, Կենտրոն, Տերյան 19, բն. 3, N 32779 11.06.2021, N 33970 30.12.2021) համակցված ապրանքային նշաններին:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

## Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արթուր Վարդերեսյանի կողմից ներկայացված «ՖԻՄ» ՍՊԸ ընկերության «Teamvesting» (No20211080) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ